

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՆՐԱՆԴ ՄԻՄՈՆՅԱՆԻՆ
«Ս. ՄԱՆԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՆԱՏԱՆԱՑ
ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶԱԲԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՆՐԱՆԴ ՄԻՄՈՆԵԱՆ,
ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, ԱՄՆ**

ԱՄՆ հայոց Արևմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տեր-
պէրեանից գոհունակութեամբ Կրեդէնցանք, որ Լոս Անջելեսում մեծ հանդիսութեամբ նշուե-
լու է Ձեր ծննդեան 80 եւ գրական գործունէութեան 55-ամեայ յորելեանը: Մեզ համար ան-
կեղծ ուրախութիւն է համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից
Նայրապետական Մեր օրհնութիւնն ու շնորհաւորանքները յղել եւ գնահատանքի Մեր խօս-
քը բերել մեր ժողովրդի շնորհաշար գաւակիդ:

Յարգարժան պրն Միմոնեան,

Անելի բան կէտդարեայ Ձեր հասարակական ու սրբազանգործական գործունէութիւնը
Բարձրեալի ամենախնամ օրհնութեամբ արգասաւորուած է բարի արդիւնքներով: Երիտա-
սարդ փարիքից Դուք կամաւորաբար լծուել էք ազգանուէր ծառայութեան՝ Ձեր նպաստը
ամենայն սիրով ու նախանձախնդրութեամբ ի սպաս դնելով մեր ժողովրդին, Նայրենիքին
ու Եկեղեցուն:

Այսօր ընթերցողի սեղանի վրայ են Ձեր հեղինակած բազմաթիւ գրքերն ու յոդուածները,
որոնք քաջալերում են հայորդի մեր գաւակներին սիրել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին
ու Մայր Նայրենիքը, հաւաքարիմ մնալ սրբազան մեր արժէքներին, ջանք ու եռանդ ներ-
դնել յանուն ազգային նուիրական իղծերի իրականացման:

Մենք առիթ ենք ունեցել ճանաչել Ձեզ եւ Կրեդէնսկ ենք նաեւ Առաքելական մեր Սուրբ
Եկեղեցու հանդէպ Ձեր որդիական նուիրումին: Գոհունակութիւն է Մեզ համար, որ Դուք
գործուն մասնակցութիւն էք բերում ԱՄՆ հայոց Արևմտեան Տիրախնամ թեմի Սուրբ Յա-
կոբ Եկեղեցու համայնքային կեանքին եւ նաեւ ազնիւ նուիրաբարութիւններով աջակցում
Եկեղեցու շինութեանն ու պայծառութեանը՝ արժանանալով հոգեւոր դասի եւ հաւաքաւոր
հայորդեաց խորին յարգանքին:

Առ ի գնահատութիւն փարիւնների Ձեր վաստակեալ գործունէութեան, սիրով ընդառաջում ենք բարեջան ձեր առաջնորդի ազնիւ խնդրանքին եւ Նայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՆԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պապուոյ բարձր շքանշանը:

Աղօթում ենք, որ Բարձրեալ Տէրը մեր մեծ Ոսուցչապետերի՝ Սուրբ Սահակի եւ Սուրբ Մեսրոպի բարեխօսութեամբ աստուածային Իր շնորհն ու օրհնութիւնը անպակաս դարձնի Ձեր յարկից ներս եւ պարգեւի Ձեզ արեւշապ կեանքի օրեր, նոր եռանդ ու ներշնչանքներ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօր Սուրբ Նոգւոյն եւ յաւեր օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 2-ն Նոյեմբերի

յամի Տեառն 2005 եւ ի թուին հայոց ՌՆԾԴ

ի Մայրաքաղաք Սրբոյ Էջմիածնի

ընդ համարաւ 324